

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 24/1

21 հոկտեմբերի 2014 թ.

Քննարկվեց Ա/Ձ Անժելա Սեդրակյանի 19.09.2014 թ-ի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի ՀՏ պետի 24.03.2014 թ-ի թիվ 249 որոշման դեմ:

Ա/Ձ Անժելա Սեդրակյանի գանգատում բերված փաստարկները.

Նոր Նորքի հարկային տեսչության պետը որոշում է կայացրել Ա/Ձ Անժելա Սեդրակյանից 390.729 դրամ գումար գանձելու մասին: Որոշմամբ ներկայացված 390.729 դրամ գումարի պարտավորությունը Ա/Ձ Անժելա Սեդրակյանը չի ընդունում, քանի որ գտնում է, որ այն առաջադրվել է անօրինական կարգով և նշված որոշումը կայացվել է օրենքի կոպիտ խախտումներով:

Ա/Ձ Անժելա Սեդրակյանը հարկային մարմնում գրանցվել է 2004 թ-ին և զբաղվել է մանրածախ առևտրով: Օրենքով սահմանված կարգով հարկային տեսչություն է ներկայացրել հաշվետվություններ և վճարել է հարկերը:

2004 թ-ի ապրիլ ամսվա կեսերից այլևս որևէ գործունեություն չի իրականացրել: Իր նկատմամբ հարկային մարմինը պարտավոր էր կիրառել «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքը և ազատեր իր նկատմամբ անհիմն կերպով հաշվարկված նվազագույն սոցիալական վճարներից ու դրանց նկատմամբ հաշվարկված տույժերից, իրեն ընդգրկել լուծարվող անհատ ձեռնարկատերերի ցանկերի մեջ և օրենքով սահմանված կարգով այն ներկայացներ պետական ռեգիստր լուծարման, ինչը, սակայն, հարկային տեսչությունը չի արել՝ ցուցաբերելով ակնհայտ անգործություն:

Հայաստանի Հանրապետությունում որևէ անձ չի կարող կրել օրենքով չնախատեսված պարտականություններ: Հարկային և պարտադիր սոցիալական ապահովության օրենսդրությունների տեսանկյունից օրենքով չնախատեսված պարտականություն է համարվում նաև օրենքով նախատեսված որևէ արտոնությունից օգտվող անձին այդպիսի արտոնության անտեսմամբ պարտավորություններով ծանրաբեռնելը: Մասնավորապես, «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքով Հայաստանի Հանրապետությունը 2003-2005 թվականների համար հաշվարկված և չվճարված եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների նվազագույն գումարների, ինչպես նաև դրանց նկատմամբ հաշվարկված և չվճարված տույժերի վճարման պարտավորություններ ունեցող անհատ ձեռնարկատերերի համար նախատեսվել են արտոնություններ՝ անկախ պարտավորությունների առաջացման հիմքերից: Բացի այդ, հարկային մարմինների համար սահմանվել է 2006 թ-ի հունվարի 1-ից հետո մինչև պետական գրանցամատյանում գործունեության դադարեցման (լուծարման) մասին գրառման պահը նշված արտոնություններից օգտվող անհատ ձեռնարկատերերի նկատմամբ պարտադիր սոցիալական ապահովության վճարների նվազագույն գումարների հաշվարկման արգելք, միաժամանակ, նույն նորմով հարկային մարմինները ծանրաբեռնվել են անհատ ձեռնարկատերերի ցանկերը պետական ռեգիստրի գործակալության համապատասխան տարածքային ստորաբաժանումներ ներկայացնելու պարտականությամբ պետական գրանցամատյանում

գործունեության դադարեցման (լուծարման) մասին գրառում կատարելու, նրանց վկայականներն անվավեր ճանաչելու և պարտավորությունները հրապարակելու համար (թիվ ՎԴ-3/0088/05/09 վարչական գործով Վճռաբեկ դատարանի 16.10.2009 թ-ի որոշումը): Սակայն հայցվոր կողմը ցուցաբերելով ակնհայտ անգործություն, չկատարելով օրենքով իր վրա դրված պարտականությունը իր վերաբերյալ համապատասխան տվյալները սահմանված ժամկետում՝ մինչև 2006 թվականի սեպտեմբերի 1-ը, չի ներկայացրել պետական ռեգիստրի գործակալության համապատասխան տարածքային ստորաբաժանմանը՝ մինչև 2006 թվականի նոյեմբերի 1-ը պետական գրանցամատյանում գործունեության դադարեցման (լուծարման) մասին գրառում կատարելու, վկայականն անվավեր ճանաչելու և պարտավորությունները հրապարակելու համար, ինչի արդյունքում գանգատաբերի վրա դրվել է սոցիալական ապահովության վճարների գծով առաջադրված 390.729 դրամ վճարելու պարտավորություն:

Հարկային տեսչությունը պետք է կիրառեր ոչ թե «Հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքով սահմանված արտոնությունը, այլ «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքով սահմանված արտոնությունը: 19.12.2012 թ-ին ընդունվել և 2013 թ-ի հունվարի 1-ին ուժի մեջ է մտել «Հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքը: Օրենքի 5-րդ հոդվածի համաձայն օրենքի ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած է ճանաչվել «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների արտոնություններ սահմանելու մասին» օրենքը, ինչպես նաև 21.08.2008 թ-ին ընդունված օրենքը:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ պարբերությամբ սահմանված դրույթների վերլուծությունից նույնպես ակնհայտ է, որ Նոր Նորքի հարկային տեսչության կողմից կայացվել է ակնհայտ ոչ իրավաչափ վարչական ակտ և այն ենթակա է անվավեր ճանաչման:

Հաշվի առնելով վերը նշված փաստական և իրավական հիմնավորումները գանգատաբերը խնդրում է ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի հարկային տեսչության պետի 2014 թ-ի մարտի 24-ի թիվ 249 որոշումն ամբողջությամբ անվավեր ճանաչել:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի ՀՏ պետը, քննարկելով Ա/Ձ Անժելա Սեդրակյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը 24.03.2014 թ-ին ընդունել է թիվ 249 որոշումը (այսուհետ նաև Որոշում), համաձայն որի 18.03.2014 թ-ի դրությամբ Ա/Ձ Անժելա Սեդրակյանի չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 390.729 դրամ, որից պարտադիր սոցիալական ապահովության վճարի գծով 371.385 դրամ (2009 թ-ի հունվարից մինչև 2012 թ-ի դեկտեմբեր ամիսների համար), եկամտահարկի գծով 19.344 դրամ (2005 թ-ի տարեկան հաշվարկ):

Քննարկման ընթացքում նշվեց նաև, որ Ա/Ձ Անժելա Սեդրակյանի մինչև 2009 թ-ի նվազագույն սոցիալական ապահովության վճարների գծով առկա պարտավորությունները համաձայն «Հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների

արտոնություններ սահմանելու մասին» թիվ ՀՕ-258-Ն ՀՀ օրենքի զիջվել են՝ ընդհանուր գումարով 325.023 դրամ:

Մինչև ժամանակ հարկ է նշել, որ մինչև 31.12.2012 թ-ը գործող «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, անհատ ձեռնարկատերերը պարտավոր են յուրաքանչյուր ամսվա համար վճարել նվազագույն սոցիալական վճար՝ 5000 դրամի չափով, մինչև հաջորդ ամսվա 15-ը: Ընդ որում՝ պետական գրանցման վկայականը ժամանակավոր հարկային մարմին հանձնած (մինչև 25.07.2012 թ-ը) և այդ ժամանակահատվածում ձեռնարկատիրական գործունեություն չիրականացրած անհատ ձեռնարկատերը նվազագույն սոցիալական վճարներ չի կատարում՝ վկայականը հանձնելուն հաջորդող ամսվանից մինչև վկայականը հետ ստանալու ամիսն ընկած ժամանակահատվածի համար:

Դա նշանակում է, որ անհատ ձեռնարկատիրոջ կողմից պետական գրանցման վկայականը ժամանակավորապես հարկային մարմին հանձնած չլինելու դեպքում անհատ ձեռնարկատերը պարտավոր էր վճարել 5000 դրամ նվազագույն սոցիալական վճար՝ անկախ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու կամ չիրականացնելու հանգամանքից:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Անժելա Սեդրակյանի կողմից պետական գրանցման վկայականը ժամանակավորապես հարկային մարմին չի հանձնվել, ինչը և հիմք է հանդիսացել նվազագույն սոցիալական վճարի գծով պարտավորությունների հաշվարկման համար:

Բողոքում բերված պնդման վերաբերյալ, որ Ա/Ձ Անժելա Սեդրակյանի նկատմամբ չեն կիրառվել «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքով սահմանված արտոնությունների կիրառման մասին» ՀՀ օրենքի դրույթները, հարկ է նշել, որ նշված օրենքի 2-րդ հոդվածի համաձայն. «Սույն օրենքի 1-ին հոդվածով սահմանված իրավունքից օգտվելու համար անհատ ձեռնարկատերը պարտավոր է ներկայացնել գրավոր դիմում իր հաշվառման (գրանցման) վայրի հարկային տեսչության մարմին»:

Այսինքն, վերոգրյալ օրենքով նախատեսված արտոնություններից օգտվելու համար Ա/Ձ Անժելա Սեդրակյանի կողմից հարկային տեսչություն պետք է ներկայացվեր գրավոր դիմում: Ա/Ձ Անժելա Սեդրակյանի կողմից նման դիմում չներկայացվելու հետևանքով վերոգրյալ օրենքով նախատեսված արտոնությունները չեն կիրառվել:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի ՀՏ պետի 24.03.2014 թ-ի թիվ 249 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

